ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

12.08.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 635-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ 18/2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ, 50-րդ, 51-րդ, 58-րդ կետերը և հիմք ընդունելով Գորիս համայնքի բնակիչ Արշակ Գրիգորյանի 2025 թվականի օգոստոսի 6-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Անկախության փողոցում գտնվող 0,00744հա հողամասին և հողամասի վրա առկա խանութին տրամադրել հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, քաղաք Գորիս, Անկախութան փողոց, 18/2 խանութ, ծածկագիր՝ 09011LRAFMPM:
2. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Գորիս քաղաքի Անկախության փողոցում գտնվող 0,01334հա հողամասին տրամադրել հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, քաղաք Գորիս, Անկախութան փողոց, 18/3 հողամաս, ծածկագիր՝ 09011EDKZ2UZ:
3. Չեղյալ համարել նախկինում տրված ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, քաղաք Գորիս, Անկախության փողոց թիվ 18/2/1 հասցեն:
4. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. օգոստոսի 12

ք. Գորիս